




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 20 » սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ  Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-01/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ ներկայացված «Սարկոլի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 08906696) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Սարկոլի» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ

նաև՝ Յուգակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Յուգակում ներառելու համար:

2. «Սարկոլի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 03.08.2015թ. թիվ 01/04.1/1931-15 գրությամբ դիմել է «Սարկոլի» ՍՊԸ-ին:

Ընկերությունը 26.08.2015թ. թիվ 42/15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 2015թ. ապրիլի 20-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ, իսկ 768922 ՀՀ դրամի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գումարը (ստուգման ակտի 10%), ինչպես նաև 13303 ՀՀ դրամ սոցիալական վճարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտք և հարկատեսակ չեն համարվում՝ կից ներկայացնելով վերոհիշյալ փաստը հավաստող ՀՀ ֆինանսների նախարարության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության 25.08.2015թ. թիվ 184 տեղեկանքի պատճենը:

3. «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 03.08.2015թ. թիվ 01/04.1/1922-15 գրությամբ դիմել է «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու):

Պատվիրատուն 13.08.2015թ. թիվ 2470-146 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-01/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ ներկայացված «Սարկոլի» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Արենի-1 Քարայրի տարածքի ցանկապատման և բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԱՀԱԻ-ՊԸԱՇՁԲ-15/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սարկոլի» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (20.04.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրության՝ «Սարկոլի» ՍՊԸ-ն 2015թ. ապրիլի 20-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 4633256 ՀՀ դրամի չափով:

4. Ընկերությունը 26.08.2015թ. թիվ 42/15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 2015թ. ապրիլի 20-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ, իսկ 768922 ՀՀ դրամի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գումարը (ստուգման ակտի 10%), ինչպես նաև 13303 ՀՀ դրամ սոցիալական վճարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտք և հարկատեսակ չեն համարվում՝ կից ներկայացնելով վերոհիշյալ փաստը հավաստող ՀՀ ֆինանսների նախարարության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության 25.08.2015թ. թիվ 184 տեղեկանքի պատճենը:

5. Կենտրոնը 01.10.2015թ. թիվ 02/04.1/2581-15 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե Ընկերությունը 20.04.2015թ. դրությամբ ունեցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե ոչ:

6. Ի պատասխան Կենտրոնի 01.10.2015թ. թիվ 02/04.1/2581-15 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 20.11.2015թ. թիվ 1/73-1/36119-15 գրությամբ ներկայացրել է Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության գրության պատճենը, համաձայն որի «Սարկոդի» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 08906696) 20.04.2015թ. ունեցել է 782225 ՀՀ դրամի չափով պարտավորություններ՝ նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գծով 768922 ՀՀ դրամ, սոցիալական վճարի /ամսեկան/ գծով 13303 ՀՀ դրամ:

Նույն գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ***նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գծով պարտավորությունները ևս համարվում են հարկային պարտավորություններ:***

5. ՍՑ-ԳԲԽ-01/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 և 20.11.2015թ. թիվ 1/73-1/36119-15 գրությունները, «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 13.08.2015թ. թիվ 2470-146 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Սարկոդի» ՍՊԸ-ի 26.08.2015թ. թիվ 42/15 գրությունը, Կենտրոնի 01.10.2015թ. թիվ 02/04.1/2581-15 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության 25.08.2015թ. թիվ 184 տեղեկանքի պատճենը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն

անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, **եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ փվյալ:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Այսպիսով, Ընկերությունը «ԳԱԱՀԱԻ-ՊԸԱՇՁԲ-15/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով 20.04.2015թ. հայտի N 2 հավելվածը ներկայացնելով՝ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (20.04.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 20.11.2015թ. թիվ 1/73-1/36119-15 գրությամբ ներկայացրել է Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության գրության պատճենը, համաձայն որի «Սարկոդի» ՍՊԸ-ն 20.04.2015թ. ունեցել է 782225 ՀՀ դրամի չափով պարտավորություններ՝ նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գծով 768922 ՀՀ դրամ, սոցիալական վճարի /ամսեկան/ գծով 13303 ՀՀ դրամ:

Նույն գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ **նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի գծով պարտավորությունները ևս համարվում են հարկային պարտավորություններ:**

Այսպիսով, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 20.11.2015թ. թիվ 1/73-1/36119-15 գրության՝ «Սարկոլի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 20.04.2015թ. ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Սարկոլի» ՍՊԸ-ի կողմից 20.04.2015թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,
- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Սարկոլի» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ,** քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնն արձանագրում է, որ «Սարկոլի» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ**

կերի «բ» ենթակերով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը:

Մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-01/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (20.04.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Սարկողի» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 20.04.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ նախաձեռնած «Սարկողի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08906696) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝




Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝




Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-01/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան